# ԱԼԻՔ

Ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային օրաթերթ

93-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 70 (24623), հատավաճառ՝ 20000 ռիալ

سال نودوسوم - شماره (۲٤٦۲۳) ۷۰ - تکشماره ۲۰۰۰۰ ریال - ۸ صفحه

ԿԻՐԱԿԻ

14 ԱՊՐԻԼԻ 2024

آلیک

یکشنبه – ۲۶ فروردین ۱۴۰۳

E-mail: info@alikonline.ir www.alikonline.ir

روزنامه سیاسی، اجتماعی، فرهنگی


# ՎՐԷԺԻ ԺԱՄԸ. ՈՍՈՒԽԸ ՊԱՏԺՈՒԵՑ



## ԻՅՊԿ ռազմաօդային ուժերն ԱԹՍ-ներով եւ հրթիռներով հարուածել են Իսրայէլին

«ԱԼԻՔ» - Իսլամական յեղափոխութեան պահապանների կորպուսի ռազմաօդային ուժերն այսօր՝ ապրիլի 14-ի վաղ առաւօտեան տասնեակ անօդաչու թռչող սարքերով եւ հրթիռներով հարուածել են սիոնիստական ռեժիմի տարածքում գտնւող թիրախներին:

Այս կապակցութեամբ ԻՅՊԿ-ն հանդէս է եկել յայտարարութեամբ, որում մասնաւորապէս նշւած է. «Ի պատասխան Դամասկոսում Իրանի դեսպանատան հիւպատոսական բաժնի վրայ սիոնիստական ռեժիմի իրականացրած յանցագործութեան՝ Իսլամական յեղափոխութեան պահապանների կորպուսի ռազմաօդային ուժերը տասնեակ անօդաչու թռչող սարքերով եւ հրթիռներով հարուածներ են հասցրել սիոնիստական ռեժիմի տարածքներում կոնկրետ թիրախների:

Հետեւելով Իրանի Իսլամական Հանրապետութեան ռազմավարական քաղաքականութեանը.

1. ԱՄՆ ահաբեկչական կառավարութեանը զգուշացնում ենք, որ Իրանի շահերին հարուածելու ցանկացած գործողութեան աջակցութիւնը եւ մասնակցութիւնը կը յանգեցնի Իրանի Իսլամական Հանրապետութեան ԶՈՒ-ի վճռական եւ ափսոսանք պատճառող պատասխանին:

2. Կարեւորելով տարածաշրջանի հարեւան երկրների հետ բարիդրացիութեան քաղաքականութիւնը, զգուշացնում ենք. ցանկացած երկրի տարածքից ԱՄՆ ահաբեկչական կառավարութեան եւ սիոնիստական ռեժիմի կողմից սպառնալիքին կը հետեւի Իսլամական Հանրապետութեան փոխադարձ եւ համաչափ պատասխանը:

Իրանի հերոս ժողովրդին վստահեցնում ենք, որ Իսլամական յեղափոխութեան պահապանների կորպուսը եւ երկրի միւս բոլոր Զինւած ուժերն ի զին կեանքի՝ կը պաշտպանեն ազգային շահերը եւ կը չէզոքացնեն թշնամիների ջանքերը՝ խաթարելու ժողովրդի անվրդովութիւնը եւ անդորրը»:

Բենիամին Մատթէոսեանը՝ «ԱԼԻՔ»-ի հետ զրոյցում.

## «ՀՀ-ի արտաքին քաղաքական վեկտորն իսկապէս փոխւում է, բայց ոչ թէ դէպի Եւրոմիութիւն այլ՝ դէպի Թուրքիա»



«ՀՀ-ի արտաքին քաղաքական վեկտորն իսկապէս փոխւում է, բայց ոչ թէ դէպի Եւրոմիութիւն այլ՝ դէպի Թուրքիա: Այն խօսոյթը, որ մենք դէպի Եւրոպա ենք գնում դրանք ուղղակի փաթեթաւորումս են պրոթուրքական քաղաքականութեան համար»: Այս մասին «ԱԼԻՔ»-ին տւած հարցազրոյցում շեշտեց քաղաքագէտ Բենիամին Մատթէոսեանը:

«2023 թւականի մայիսին Մինսկի խմբի համանախագահ Լուիս Բոնոն ի թիւս այլ հարցերի, խօսելով ՀՀ-ի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղութեան գործընթացի վերաբերեալ ասում էր, որ կողմերը անհրաժեշտ է այնպիսի կոնսենսուսի գնան, որ ոչ միայն խաղաղութիւն լինի նրանց միջեւ, այլ, նաեւ, անվտանգային առումով համագործակցութիւն»,- նշեց նա:

Մատթէոսեանը արձանագրեց, որ ամերիկայի տարածաշրջանային գործընկերը Թուրքիան է, որը շարունակում է մնալ ՆԱՏՕ-ի անդամ, որի գործընկերն է նաեւ Ադրբեջանը: Վերջերս էլ Անտալիայի դիւանագիտական ֆորումի ժամանակ Հարաւային Կովկասի եւ Վրաստանի ճգնաժամի հարցերով Եւրոպական միութեան յատուկ ներկայացուցիչ Տոյվօ Կլաարը յայտարարեց, որ Թուրքիան որպէս տարածաշրջանի առաջընթաց պետութիւն կարող է իր դերակատարութիւնը դրսեւորել խաղաղութեան հաստատելու

(Շար. 8-րդ էջում)

## Իսրայէլի վրայ Իրանի յարձակման տասը հնարաւոր հետեւանքները եւ դասերը՝ Media-geopolitics-ի մեկնաբանութեամբ

(Տես 2-րդ էջում)




## ՀՅԴ Պատանեկան համագումարի մասնակիցները՝ «ԱԼԻՔ»-ում

(Տես 8-րդ էջում)



Սիոնիստական պորտալ.

## «Ադրբեջանը համաձայնել է Իրանին սահմանակից իր ավիաբազները տրամադրել Իսրայէլին»

«ԱԼԻՔ» - Սոցցանցերում, իրանական օգտագործողների մօտ լայն շրջանառութիւն է գտել Իրանի պատասխան հարւածից յետոյ, սիոնիստական Terror alarm լրատւական պորտալի հրապարակումը, որում նշւած է, թէ Բաքւի բարբարոսական վարչախումբն ինչպէս միշտ կանգնած է սիոնիստական ռեժիմի կողքին:

«Ի տարբերութիւն Թուրքիայի, որն անընդհատ դաւաճանում է ազատ աշխարհին, Ադրբեջանն Իսրայէլի իրական բարեկամն է:

Ադրբեջանը համաձայնել է Իրանի սահմանին կառուցւած 3 նոր ավիաբազները մեզ տրամադրել, Իրանի վրայ օդային եւ ԱԹՍ-ների յարձակումների համար»,- գրել է սիոնիստական պորտալը:

Յ. Գ. - Ուշադրութիւն դարձրէք, թէ Հայաստանի սահմաններն ինչպէս են պատկերւած քարտէզում:






«Հայրենասիրութիւնը ճառ չէ՛, գործ է, խօսք չէ՛, պայքար է: Ատամներով ու ճիրաններով ամէհի կռիւ է, անմխացորդ նւիրում ու անձնուրաց զոհողութիւն է, ճակատի քրտինք է ու վերջապէս ժողովրդի խորարմատ խարիսխները կռող հայրենի հողի վրայ թափած արիւն է՝ հայրենի հողի ու սեփական ժողովրդի շէնացման, բարգաւաճման ու հզօրացման նպատակով»

Խաժակ Տէր-Գրիգորեան (1941-2001), ՀՅԴ Բիւրոյի նախկին անդամ, Դաշնակցութեան արդի մտքի եւ գաղափարախօսութեան ականաւոր տեսաբաններից


ARAM® coffee
ԱՐԱՄ
قهوه آرام
սուրճ
فروشگاه مرکزی:
قائم مقام فراهانی–شماره ۶۴
88303478 եւ 88308730
www.aramcoffee.com
instagram:aram__coffee

ՕՐՒԱՅ ԹԵՄԱ

# Իսրայէլի վրայ Իրանի յարձակման տասը հնարաւոր հետեւանքները եւ դասերը՝ Media-geopolitics-ի մեկնաբանութեամբ

1. Իրանի եւ Իսրայէլի միջեւ 45-ամեայ սառը պատերազմը վերասահմանեց իր կարմիր գծերը:

2. Իրանի Իսլամական Հանրապետութեան կողմից սպասուածից աւելի մեծ յարձակումը, ցոյց տուեց ԱՄՆ-ի, որպէս դաշնակիցներին պաշտպանող կողմի խոցելիութեան սահմանները:

3. Իսրայէլի գործօնը, որպէս զսպող ուժ թուլացաւ, միաժամանակ ակնյայտօրէն ԱՄՆ-ի պաշտպանութեանն ապաւինելու Իսրայէլի կարիքը ցայտուն դարձաւ:

4. Իրանի Իսլամական Հանրապետութեան ռազմական հնարաւորութիւններն այժմ լուրջ փորձութեան ենթարկւելու կողքին, յատուկ ուշադրութեան կենտրոնում են:

5. Աշխարհում դեսպանատների վրայ ռազմական յարձակումների գնի բարձրացումը եւս Իրանի վճռորոշ պատասխանի արդիւնքներից կարող է լինել:

6. Իրանի Իսլամական Հանրապետութեան վարկանիշն աճ է արձանագրել պաղեստինցիների եւ արաբմահմեդական համայնքների շրջանում՝ անկախ հակամարտութիւնը շարունակելու վտանգից ու արդիւնքից:

7. Իրանի Իսլամական Հանրապետութեան ազդեցութեան մեծացում՝ Մերձաւոր Արեւելքի խնդիրներում, իհարկէ եթէ այն աւելի լուրջ հակամարտութեան առիթ չդառնայ:

8. Իրանի ներքին քաղաքականութեանն ընբռնումով մօտենալը նրա արտաքին քաղաքականութեան դոկտրինան հասկանալու միակ բանալին է:

9. Իրանը կը շարունակի աջակցել «Հեզբոլլահ»-ի կրակային հզօրութեանը Իսրայէլի հետ ապագայ հնարաւոր առճակատման ֆոնին:

10. Եթէ Իսրայէլն իր ուղղութիւնը պաշտպանութիւնից յարձակման փոխի, Իրանի Իսլամական Հանրապետութիւնը կարող է ակտիւացնել իր միջուկային ծրագրերը:

***

-Ամերիկեան անկախ փորձագիտական շրջանակները սխալ են որակել Իրանի հիւպատոսութեան շէնքի վրայ Իսրայէլի յարձակումը:

-NBC-ի համաձայն՝ տարբեր առիթներով ԱՄՆ-ի պաշտօնեաներն ափսոսանք են յայտնել ապրիլի 1-ին Սիրիայում Իրանի հիւպատոսութեան շէնքի վրայ յարձակման Իսրայէլի որոշման կապակցութեամբ:

-Նրանց խօսքով՝ իսրայէլցիները սխալ հաշւարկումներով են նման յարձակմանն անցել, առանց մտածելու հետեւանքների մասին եւ չեն պատկերացնում, թէ դա ինչպէս կարող է ազդել ՀԱՄԱՍ-ի կողմից պատանդներին ազատ արձակելու բանակցութիւններով պայմանաւորուած Գազայի գործողութիւնների վրայ: Կառավարութեան բարձրաստիճան պաշտօնեաներից մէկն էլ ամերիկեան խոշոր լրատւամիջոցին յայտնել է, թէ չի կարծում, որ Իսրայէլն ունի մտածուած ռազմավարութիւն:

«Իսրայէլցիների ընդունած ռազմավարական որոշումները միշտ չէ, որ լաւն են»,- ակնարկով նշել է պաշտօնեան:

«Դամասկոսում Իրանի հիւպատոսարանը թիրախաւորելով կարող էր աղէտալի հետեւանքներով լարել Գազայի հակամարտութիւնը»,- յաւելել է ռազմական փորձագէտը եւ ռազմական գործողութիւններում Իսրայէլի մօտեցումը «անխոհեմ» է որակել:

***

-Սիոնիստական լրատւամիջոցները, յղում անելով ռեժիմի ռազմական առաջնորդներին, յայտնում են, որ Իրանը արձակել է 185 մահապարտ անօդաչու թռչող սարք, 36 թեւաւոր հրթիռ եւ 110 մարտավարական ու բալիստիկ հրթիռ: Կրակոցների մեծ մասը հնչել են Իրանի ներսից, իսկ շատ փոքր մասը՝ Իրաքից ու Եմէնից:

-Իսրայէլի կողմից խիստ ցենզուրայի ենթարկուած տեղեկատւական դաշտի արտահոսքի համաձայն՝ Իրանին յաջողուել է ոչնչացնել մի քանի ռազմական կայանքներ, մեծ մասը Իսրայէլի հարաւային գօտում, մասնաւորապէս՝ Նեգեւի աւիաբազայի եւ բանակային կայանքները:

-Տեղեկութիւնների համաձայն՝ Նեգեւում գտնուող Նեւաթիմ աւիաբազան, որտեղ տեղակայուած են F-16 եւ F-35 ինքնաթիռները, խոցուել է իրանական բալիստիկ հրթիռներով եւ բռնկւել:

-Քչերն էին կանխատեսում, որ «Անսարօլլահ»-ը կը կարողանայ սիոնիստական ռեժիմի պատկերացրած հաւասարումները խախտել, միեւնոյն ժամանակ՝ արտատարածաշրջանային ուժերի համար բարդութիւններ ստեղծել:

«Իրան» օրաթերթի վերլուծաբան Հուէյն Ֆաթեմին գրած ակնարկով վերլուծել է Եմէնի «Անսարօլլահ»-ի զսպող ուժի դերը՝ յիշեցնելով ջրային միջանցքների ու նաւարկութեան ուղիների խափանումը Ֆրանսիային եւս ստիպել է սիոնիստներին աջակցելու իր քաղաքականութեանը յետեւելով՝ աւելի հզօր ներկայութիւն ապահովել Կարմիր ծովում: Փորձագէտի համաձայն՝ Ֆրանսիան Կարմիր ծովում հաստատուած իր տակտիկական ռազմանաւը փոխարինել է Միջերկրական հասած միջուկային «Շառլ դը Գոլ» աւիակիրով:

Աղբիւրի համաձայն՝ Եմէնում Al-Alam News Network-ի թղթակիցը նշել է, որ ուրբաթ օրը խորհրդանշական ռազմածովային եւ ցամաքային զօրավարժութիւնների ժամանակ Եմէնի «Անսարօլլահ»-ի 12 հազարանոց ստորաբաժանումները յարձակուել են ԱՄՆ-ի, Անգլիական եւ սիոնիստական դրօշը կրող նաւերի վրայ:

«Անսարօլլահ»-ը յստակ նշել է, որ Կարմիր ծովը եւ Ադէնի ծոցը անվրդտանգ են բոլոր նաւերի համար, բացառութեամբ՝ «չարորակ եռեակ կոալիցիայ»-ի (ԱՄՆ, Իսրայէլ, Մեծ Բրիտանիա եւ նրանց աջակիցների) նաւերի:

# Հայաստանի եպիսկոպոսների եւ թեմակալ առաջնորդների յայտարարութիւնը Տաւուշի մարզից տարածքներ յանձնելու վերաբերեալ




Վերջին շրջանի զարգացումները այլեւս կասկած չեն թողնում, որ Հայաստանի իշխանութիւնները Արցախի լիակատար հայաթափման եւ ՀՀ տարածքների բռնազաւթման պայմաններում, տեղի տալով Ադրբեջանից հնչող սպառնալիքներին, պատրաստւում են վերջինիս յանձնել Տաւուշի մարզից տարածքներ նախքան ենթադրւող սահմանազատումն ու սահմանագծումը:

Պարտուողական այս մօտեցմամբ, տարածքային ցաւալի հերթական զիջումներով, ըստ էութեան, յաչս միջազգային հանրութեան լեգիտիմացւում են Հայաստանի տարածքների նկատմամբ Ադրբեջանի կեղծ պահանջատիրութիւնը եւ դատապարտելի հաւակնութիւնները:

Եկեղեցին միարժէքօրէն ողջունում է խաղաղութեան հասնելուն ուղղուած բոլոր ողջամիտ ջանքերն ու գործընթացները: Անվիճարկելի է, որ միակողմանի զիջումներով «խաղաղութեան դարաշրջան» կերտելու՝ Հայաստանի իշխանութիւնների որդեգրած քաղաքականութիւնը ոչ միայն անիրատեսական է, այլեւ աղէտաբեր: Հայրենի հողի շուրջ սակարկումները եւ չարդարացուած շարունակական զիջումները երբեք անվտանգային միջավայր չեն կարող ապահովել մեր ժողովրդի համար:

Տեւական ու ամուր խաղաղութիւն հնարաւոր է կերտել ազգային արժանապատուութեան եւ իրաւունքների հանդէպ լիարժէք յարգանքի դրսեւորման եւ փոխադարձութեան սկզբունքի պահպանման պայմաններում:

Կոչ ենք ուղղում ՀՀ իշխանութիւններին՝ հրաժարուել պարտուողական գործելաոճից եւ ծառացած հիմնախնդիրների շուրջ բանակցութիւններում ընթացք չտալ պարտադրւող այնպիսի լուծումների, որոնք հայրենիքը կը կանգնեցնեն անվտանգային նոր մարտահրաւէրների առջեւ:

Կոչ ենք ուղղում նաեւ Հայաստանի եւ Սփիւռքի ազգային, քաղաքական, հասարակական կազմակերպութիւններին, հայրենիքի ապագայով մտահոգ ազգի բոլոր զաւակներին՝ այդ թւում եւ պետական պաշտօնատար անձանց՝ համախմբուել եւ համազգային միասնականութեամբ պաշտպանել ազգային-պետական մեր շահերը, ողջ ներուժով ներդրում բերել պետականութեան ամրապնդման ու բարօր, ապահով գալիքի կերտման գործում:

Հաւատում ենք, որ մեր ժողովրդի մէջ զօրեղ է հայրենանուիրումի եւ անձնականն ի սէր ազգի զոհաբերելու յանձնառութեան ոգին, ամուր՝ ազգային ինքնութիւնը պահպանելու նախանձախնդրութիւնը, եւ մենք յարուցեալ Փրկչի օգնականութեամբ ու համընդհանուր ջանքերով ի զօրու ենք հեռացնել արհաւիրքն ու չարիքը հայրենական մեր կեանքից:

Սրտաբուխ աղօթքով հայցում ենք Երկնաւոր Տիրոջից, որ խաղաղութեան ու համերաշխութեան շնորհները յեղի մեր երկրի եւ ժողովրդի կեանքում եւ անվտանգ ու անսասան պահի Հայոց անկախ պետականութիւնը:

Անդրէյ Արեշեւ.

# «Արեւմտեան գործընկերները բացայայտ փորձում են Հայաստանին տեղաւորել Ռուսաստանի շուրջ պատժամիջոցների ռեժիմի մէջ»



Ռուս քաղաքագէտ, Ռազմավարական մշակոյթի հիմնադրամի փորձագէտ Անդրէյ Արեշեւը Alpha News-ի հետ զրոյցում մեկնաբանել է հայ-ռուսական յարաբերութիւնների ներկայիս փուլը եւ ընդգծել, որ ռուսական կողմն այժմ ցուցաբերում է առաւելագոյն համբերութիւն, որպէսզի չկորցնի հաստատուած կապերը:

«Ռուսաստանն արդէն մի քանի տարի է, որ գտնւում է կոշտ քաղաքական, դիւանագիտական եւ պատժամիջոցային դիմակայութեան իրավիճակում, ինչն, ի դէպ, զգում են եւ Ռուսաստանի դաշնակիցներն ու գործընկերները, այդ թւում՝ Հայաստանի Հանրապետութիւնը: Եւ մենք շատ լաւ հասկանում ենք, որ վերջին շրջանում քայլեր են ձեռնարկւում Կովկասում Ռուսաստանի համար լրացուցիչ ճակատ կազմակերպելու եւ այդ տարածքը մարտահրաւէրների ու սպառնալիքների աղբիւրի վերածելու ուղղութեամբ:

Նաեւ փորձել կազմալուծել, մասնատել եւ լղոզել այն ինտեգրացիոն միաւորումները, որոնք յիշատակել է, այդ թւում՝ Սերգէյ Լաւրովը: Առաջին հերթին նշանառութեան տակ կը յայտնուի Եւրասիական տնտեսական միութիւնը: Արդէն մէկուկէս տարի է, ինչ Հայաստանի Հանրապետութիւնը մի շարք պատճառներով սառեցրել է իր մասնակցութիւնը ՀԱՊԿ միջոցառումներին, նւազեցրել է ներկայացուածութիւնը ԱՊՀ շրջանակներում, այդ թւում՝ նախարարական հանդիպմանը:

Դա, իմ կարծիքով, շատ ցաւալի է, բայց ինձ թւում է, որ այժմ ռուսական կողմը առաւելագոյն համբերութիւն է ցուցաբերում եւ գործադրում է բոլոր ջանքերը, որպէսզի «չկտրի բոլոր կճուճները»: Այդ պատճառով մենք տեսնում ենք եւ Դմիտրի Պեսկովի յայտարարութիւնը, եւ որոշ այլ քայլեր, որոնք վկայում են այն մասին, որ, այնուամենայնիւ, կը ձեռնարկուեն բոլոր հնարաւոր ջանքերը կապերը պահպանելու համար: Առաջին հերթին տնտեսական ոլորտում կապերը, որոնք ձեռնտու են ե՛ւ Ռուսաստանին, ե՛ւ Հայաստանին: Չնայած նրան, որ արեւմտեան, այսպէս կոչուած, գործընկերները լրջօրէն փորձում են տապալել Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ էներգետիկ գործընկերութիւնը եւ արդէն ուղղակիօրէն եւ բացայայտ խօսում են այն մասին, որ փորձում են Հայաստանն աւելի սերտօրէն տեղաւորել պատժամիջոցների ռեժիմի մէջ, որը ստեղծւում է Ռուսաստանի շուրջ»,- նշել է քաղաքագէտը:

# Լեւոն Զուրաբեանը՝ Արամ Մանուկեանի եւ ցեղասպանութեան մասին



**Խաչիկ Տէր-Ղուկասեան**

**Ինչո՞ւ Զուրաբեան իր այլապէս այնքան կուռ վերլուծումին մէջ կը բերէ Ցեղասպանութեան պատճառաբանութեան բացատրական այս վարկածը եւ կը նշէ Արամ Մանուկեանը, ընդորում, Մահարիի գործի յղումով, զայն նկատելով ցեղասպանութեան պատճառ դարձած գործօններէն մէկը:**

*Սաթիկ Սէյրանեանի Պրեսինգ հաղորդաշարի իր վերջին հարցազրոյցին մէջ (մարտի 24, 2024), Հայ Ազգային Կոնգրես (ՀԱԿ) կուսակցութեան փոխնախագահ Լեւոն Զուրաբեան կը հրամցնէ ներկայ իշխանութիւններուն եւ անձնապէս Նիկոլ Փաշինեանի քաղաքական ուղեգիծին թերեւս ամենէն յստակ վերլուծումը: «Էս մարդը», կըսէ Զուրաբեան Փաշինեանին մասին խօսելով, «ինքն էլ չգիտի, թէ ոնց բերի խաղաղութիւն, ինքն էլ չգիտի, թէ ինչ գին պէտք է վճարի խաղաղութեան համար:» Չունի ռազմավարութիւն, ընդորում կը ստեղծէ հետեւողական պատրանքներ ժողովուրդին խաբելու համար, եւ իր քաղաքական ապագան կապած է նոր պատրանքի մը՝ խզել Ռուսիոյ հետ եւ գնալ Արեւմուտք:*

*Ընդլայնելով «պատրանքներ»-ով քաղաքականութիւն ընելու իր վերլուծումը, Զուրաբեան, հարցազրոյցի աւարտի մօտ (ձայնագրութեան 1:25:20-էն սկսեալ) կանդրադառնայ 1915-ի Ցեղասպանութեան պատճառներուն, եւ կըսէ, թէ այն տեղի ունեցաւ «որովհետեւ մենք հաւատում էինք եւրոպական մեծ տէրութիւնների եւ Ռուսաստանի խոստումներին, կարանթիաներին, որ նրանք… Օսմանեան կայսրութիւնում վեց Վիլայեթներին, Բեռլինի կոնգրեսին… հաւատո՞ւմ էինք չէ», եւ կը շարունակէ, ենթադրելով որ եթէ «մենք չհաւատայինք, մի քիչ աւելի պրագմատիկ տրամադրուած լինէինք, չգնայինք այնքան լուրջ կոնֆրոնտացիայի եւայլն եւայլն, մենք ահագին բան կը փրկէինք»:*

*Մէկ քայլ աւելի առաջ անցնելով, Զուրաբեան խորհուրդ կու տայ կարդալ Գուրգէն Մահարիի Այրւող Այգեստաններ վէպը, անդրադառնալու համար «ոնց իրականում այդ մարդիկ, վանեցիները, իրենք կարենային եղա գնալ թուրքական իշխանութիւնների հետ, բայց եկան կողքից, Թիֆլիսից, Ղարաբաղից, ինչ որ պրովոկատորներ, Արամ Մանուկեանը եւայլն, եւայլն, եկան, խառնեցին, տարան դէպի կոնֆրոնտացիա, եւ տեղի ունեցաւ Ցեղասպանութիւնը»:*

*Դժուար է հասկնալ, թէ ինչո՞ւ Զուրաբեան իր այլապէս այնքան կուռ վերլուծումին մէջ կը բերէ Ցեղասպանութեան պատճառաբանութեան բացատրական այս վարկածը եւ կը նշէ Արամ Մանուկեանը, ընդորում, Մահարիի գործի յղումով, զայն նկատելով ցեղասպանութեան պատճառ դարձած գործօններէն մէկը: Գիտա՞կցաբար եղած է այդ, թէ՞ լոկ ոչ-գիտակից վրիպում մըն է: Եւ ինչո՞վ Արամ Մանուկեանի կերպարի Մահարիական ինքնին խնդրայարոյց եւ գրական ու ոչ-գրական ահագին բանավէճի նիւթ դարձած մեկնաբանութիւնը Զուրաբեանի հարցազրոյցին մէջ յաւելեալ բացատրութիւն կամ յստակացում կը բերէ Փաշինեանի հայրենի հող յանձնող քաղաքականութեան իր վերլուծումին:*

*Ամէն պարագայի, գիտակից թէ անգիտակից, Զուրաբեան անկեղծ է իր, իր կուսակցութեան եւ անոր հիմնադիրին խորքային համոզումին, ընդորում Ցեղասպանութեան առաջնահերթային պատասխանատուութիւնը պիտի փնտռել մեր մէջ, Օսմանեան կայսրութեան հետ «կոնֆրոնտացիա»-ի երթալու փոխանակ «եղա երթալու», եւ եւրոպացիներէն թէ Ռուսիայէն փրկութեան «պատրանքներ» ունենալու: Եօթանասունամեայ խորհրդային վարչակարգի պայմաններու մէջ զարգացած բոլշեւիկեան այս թէզը, անկախութեան առաջին տարիներուն վերաճեցաւ «պետական մտածողութեան», որ կտրուկ հակադրուեցաւ «պատրանքային» Հայ Դատի պահանջատիրութեան եւ ՀՀ արտաքին քաղաքականութեան մէջ ամրագրուեցաւ որպէս «Թուրքիոյ հետ առանց նախապայմաններու յարաբերութիւններ» սկզբունք: Այս վերջինը երբեք չենթարկուեցաւ քննադատական մօտեցումով պարբերական վերատեսումներու, գէթ ճշդելու համար թէ գործնական գետնի վրայ ճիշդ ինչ կրնայ նշանակել, եւ արդէ՞օք կարելի չէ այլընտրանքային մօտեցման սկզբունքային բանաձեւում մը:*

*Նիկոլ Փաշինեանը հրապարակային կերպով երբեք չէ թիրախաւորած Արամ Մանուկեանը: Ընդհակառակը, հաւատալով թէ պարզապէս հաւատարիմ իր ամբոխահաճոյ քաղաքական ոճին, հրապարակային իր քանի մը ելոյթներուն մէջ վեր առած է անոր կերպարը: Բայց Նիկոլ Փաշինեան քաղաքական գործիչը կազմաւորուեցաւ Լեւոն Տէր-Պետրոսեանի անմիջական հովանաւորութեամբ, եւ անոր ձեռքէն բռնած մտաւ քաղաքական բեմ: Եւ 44-օրեայ պատերազմի պարտութենէն ի վեր թուրքական բոլոր նախապայմաններուն ընդառաջելով կաշխատի յարաբերութիւնները տեղափոխել «չթշնամանք»-ի նման սոփեստութիւններու մակարդակ:*

*Սէյրանեանի հետ իր ունեցած հարցազրոյցին մէջ Զուրաբեան փաստը կու տայ պանթուրքական ծրագրի առկայութեան իր գիտակցումին երբ կանդրադառնայ «Զանգեզուրի միջանցք»-ի թուրք-ադրբեջանական պահանջին: Եթէ այդ գիտակցումին հասած է իր քաղաքական ուժը, որ երբ որպէս Հայոց Համազգային շարժում իշխանութիւն եղաւ 1990-ականներուն հարցականի տակ դրաւ, մինչեւ իսկ ժխտեց, պանթուրքականութիւնը իր այժմէականացած ձեւով, ինչո՞ւ կը շարունակէ պատմութեան վերատեսութիւնը ընդորում 19-րդ դարու աւարտի 20-րդ դարու առաջին երկու տասնամեակներու հայ ազգային ազատագրական պայքարը, հայկական յեղափոխութի՛ւնը, կը վերածէ Ցեղասպանութեան պատճառի, այսինքն՝ կը պնդէ բոլշեւիկեան թէզին վրայ…*

*Արամ Մանուկեանը Ցեղասպանութեան պաճառ՝ իրա՞ւ… Ինչո՞ւ այս ցեխարձակման թէկուզ եւ ակամայ շարունակումը յիշատակին անոր, որ Վանի հերոսամարտը կազմակերպեց, «Երեւանը չե՛նք դատարկի» պատգամեց, Սարդարապատի, Ղարաքիլիսէի եւ Բաշ Ապարանի մէջ յաղթե՛ց, վեց դարերու ստրկութենէ յետոյ անկախ պետականութեան ծնունդ տուաւ…*

*Փաշինեանական աղէտը կասեցնելու հետամուտ ընդդիմութեան բոլոր քաղաքական ուժերն ու ակնառու գործիչները կարծես կը գիտակցին ուժերու համախմբման անհրաժեշտութեան: Զուրաբեանին անկասկած պիտի տեղադրել ընդդիմադիր այդ համախմբման մէջ, ոչ միայն որովհետեւ իր վերլուծումները համահունչ են ընդհանրապէս բոլոր ընդդիմադիրներու վերլուծումներուն, այլ նաեւ որովհետեւ ան բազմիցս փաստը տուած է ներքին թէ արտաքին քաղաքականութիւնը ազգային շահի պաշտպանութեան բանականութեան ուղիին բերելու ճիգերուն կարեւոր ներդրում ունենալու կարողութեան: Այս իմաստով, ընդդիմադիր ուժերու ուշադրութենէն թերեւս վրիպին պատմութեան վերատեսութեան հետամուտ եւ Արամ Մանուկեանի նման տիպարի մը հանդէպ մեղմ ըսուած ոչ-պատշաճ արտայայտութիւնները: Բայց հայ քաղաքական մտածողութիւնը ինչ որ տեղէ մը զգաստութեան ձայն պիտի բարձրացնէ նման սայթաքումներու եւ մի գուցէ պատմութեան վերատեսութեան համոզումներուն դէմ, որոնք մօտիկ անցեալին այսօրուան Նիկոլ թէ ոչ, երկփեղկումէն շատ աւելի խորքային երկփեղկումի առաջնորդեցին: Եթէ մօտիկ անցեալի եւ անմիջական ապագայի պատմական վերատեսութիւն մը կայ, ապա եւ այդ մէկը (ինքնա)քննադատական մօտեցումն է «Թուրքիոյ հետ առանց նախապայմաններու յարաբերութիւններ» սկզբունքին, թէ՞ իսկական «պատրանք»-ին…*

*Այդ տեղը ուրկէ հայ քաղաքական մտածողութիւնը նման զգաստութեան փաստը պիտի տայ Սփիւռքն է: Թէ այս իշխանութիւններուն հեռացումը միայն դրական կրնայ ըլլալ Սփիւռքի մէջ հաւաքական հիասթափութեան վերջ տալու իմաստով կասկածի առիթ չի տար: Առնուազն կարելի է յուսալ, որ «պետականամէտ» ինչ որ սփիւռքի մը առաջացման հաւանականութեամբ Սփիւռքը անտեսող եւ պառակտող քաղաքականութիւնը կասեցուի: Բայց Սփիւռքը գործնական քիչ եւ ոչինչ կրնայ ընել Հայաստանի ներքաղաքական ոլորտին մէջ, ինչ որ հարցով ստեղծուելիք կամ ստեղծուած կացութեան վրայ ազդելու իմաստով: Անկախութենէն ի վեր, հայկական պետական համակարգին մէջ Սփիւռքին ձայնով եւ քուէով մասնակցութեան հայեցակարգ ստեղծելու քաղաքական ոչ մէկ կամեցողութեան կամ համախոհութեան նախանշան տըրուած է:*

*Ընդհակառակը, հայրենի քաղաքական հաստատները ընդհանրապէս դժկամ եղած են լոկ հետեւորդ Սփիւռքէն աւելի յանդուգն Սփիւռք մը ընդունելու որպէս գործընկեր: Այս իշխանութիւններու հեռացումը, հետեւաբար, ոչ անհրաժեշտ եւ նուազ՝ բաւարար պայման է Սփիւռքը հիասթափութենէն վիրինքնակազմակերպումի, ուրոյն օրակարգի ստեղծման եւ քաղաքական մտածողութեան ու գործի դաշտի վերաձեւաւորման մղելու համար: Այդ մէկին նախանձախնդրութիւնը պիտի գայ Սփիւռքէն, եւ առաջին հերթին համասփիւռքեան կազմակերպական ցանց եւ զօրաշարժի կարողութիւն ունեցող կառոյցներու ղեկավարութիւններէն եւ շարքերէն: Որովհետեւ՝ մտահան պէտք չէ ընել, որ անկախութենէն յետոյ բոլշեւիկեան պատմական խեղաթիւրման վերաբանաձեւման եւ անոր «պետական մտածողութեան» տրամաբանութիւն տւող ճիգերուն մէջ իրենց ներդրումը ունեցան նաեւ սփիւռքեան շրջանակներ եւ անձնաւորութիւններ:*

**«Յորիզոն»**

# Բրիւսէլի եռակողմանի յայտարարութեան ճակատագրական բացը



*ԱՄՆ-ի, Եւրոմիութեան եւ Հայաստանի իշխանութիւններուն կողմէ հրապարակուած միացեալ յայտարարութիւնը կը խօսի ամէն ինչի մասին, բացի Հայաստանի համար կենսական եւ անմիջական նշանակութիւն ունեցող անվտանգութեան սպառնալիքներէն: Կը խոստանայ ամէն բան, բացի թուրք եւ ադրբեջանական ոտոխին դէմ ապահովութեան շօշափելի երաշխիքներէ: Ան բացարձակապէս կանգիտանայ գոյութենական այն սուր ճգնաժամը, որուն դէմ-յանդիման կը գըտնուի մեր երկիրը այսօր:*

*Այս պայմաններուն մէջ, բացառիկ ուշիմութեան կարիք չունի թշնամին հասկնալու համար, որ Հայաստանի նոր «հովանաւոր»-ները երբեք հետաքրքրուած չեն իր ձեռքերը «կապելով»: Անոնք երբեք հետաքրքրուած չեն Հայաստանի անվտանգութեան խնդիրներու լուծման մէջ դերակատար ըլլալով:*

*Բրիւսէլի յայտարարութեամբ, Արեւմուտքի տէրերը յստակօրէն կը լուան իրենց ձեռքերը եւ անգամ մը եւս Հայաստանը կը լքեն իր ճակատագրին: Աւելի՛ն: Անոնք գործնականօրէն կանցնին թշնամիին կողմը ռազմական հողի վրայ նժարը թեքելով ի նպաստ թուրք եւ ադրբեջանական բեւեռին: Պարզ է, որ անոնք իրենց գրաւը դրած են Կովկասի մէջ Թուրքիոյ եւ Ադրբեջանի միջոցով Մոսկուան եւ Իրանը հակակշռելու սին յոյսերուն վրայ: Մինչ այդ՝ կրկին ծախուողը հայ պետականութեան կենսական շահերն են տնտեսական եւ մարդասիրական օգնութեան թափանցիկ շղարշներուն ետին:*

*Անմիջական հետեւանքը այս մնջախաղին՝ ադրբեջանական ուժերու վերջին ոտնձգութիւններն են: Կարդա՛լ ՀՀ Արտգործնախարարութեան ստորեւ տեղադրուած յայտարարութիւնը: Նախարարութիւնը կը փութայ ինքզինք շնորհաւորել Բաքուի կողմէ ռազմական գործողութիւններու կասեցման համար: Աւելի զգօն վերաբերմունքը պիտի պահանջէր ակընկալել աւելի մեծ վտանգը, որ դեռ մեր առջեւն է եւ պատրաստիլ աւելի ծաւալուն մարտահրաւէրներու:*

*Կը տեղեկացնեն, թէ այսօր Ֆրանսայի դեսպանը Երեւանի մէջ խօսած է ՀՀ անվտանգութեան զօրավիգ կանգնելու Ֆրանսայի դիտաւորութեան մասին: Ի՞նչ պէտք է հասկնալ այս ջերմ հաւաստիքներէն… որոնք երբեք յստակ մարմնաւորում չեն ստացած մինչեւ օրս: Պէտք է անշուշտ հետապնդել դիւանագիտական այս ելոյթները հաստատելու համար անոնց իրական կշիռը, բայց նաեւ պէտք է անպայման կազմակերպել իրական զուգահեռը եւ պատրաստիլ իրական կռուի:*

*Փաստը այն է, որ ահաւասիկ կրկին, այս ուշ ժամուն, ՀՀ իշխանութիւնները կը շարունակեն ապաւինիլ «խաղաղութեան օրակարգ»-ին միաժամանակ ընդունելով, որ թշնամին բացարձակապէս հետաքրքրուած չէ նման փաթեթներով: Մերկ իրականութիւնը այն է, որ մենք չունինք ոչ Մոսկուայի եւ ոչ Արեւմուտքի յստակ զօրակցութիւնը եւ երկիրը կը գտնուի քաղաքականապէս սնանկ իշխանութեան մը ձեռքին: Հետեւաբար պայման է, որ առաջին հերթին փաշինեանական համակարգը դադրի մեր երկրին ճակատագիրը տնօրինելէ: ԴԱԴՐԵՑՈՒԻ՛:*

*Բրիւսէլի յայտարարութիւնը իր մեծ խոստումներուն յետին բացայայտեց ՀՀ քաղաքականութեան էական բացը: Ներկայի տուեալներով, Հայաստանի դէպի Արեւմուտք շրջադարձը շատ հեռու է թուրք եւ ադրբեջանական մեծ սպառնալիքը չէզոքացնել կարենալէ: Ընդհակառակն ան նոր աշխուժութիւն հաղորդած է թըշնամիի յարձակապաշտ ռազմավարութեան: Թուրք եւ ադրբեջանական բեւեռը կը շարունակէ տիրապետել տարածաշրջանի խաղասեղանին թէ՛ Մոսկուայի, եւ թէ՛ Արեւմուտքի հետ յարաբերութիւններու խաղաքարտերը իր հակակշռին տակ պահելով: Փոխանակ մեր անվտանգութեան կացութիւնը բարելաւելու, Բրիւսէլի բանակցութիւններով մենք բացէ ի բաց վատթարացուցած ենք մեր կացութիւնը: Մինչեւ ե՞րբ՝ այս ամենօրեայ զահավէժը:*

**Կարօ Արմէնեան**






# Սիւզան Խարտալեանի «Inside Her Inside Me, A Tale of Three Yazidi Women» վաւերագրական ֆիլմը՝ Ցեղասպանութեանց կանխարգիլման ահազանգող ղօղանջ է

*Շւեդահայ լրագրող, հրապարակախօս, վաւերագրական ֆիլմերու հեղինակ եւ բեմադրիչ Սիւզան Խարտալեանի «Inside Her Inside Me, A Tale of Three Yazidi Women» փաստավաւերագրական ֆիլմը The Wiener Holocaust Library-ի նախաձեռնութեամբ, ապրիլի 30-ին պիտի ցուցադրուի Լոնդոնի մէջ:*

*Երբ 21-րդ դարու զարգացած քաղաքակրթութեան աչքին դիմաց կիրականացուի ամէնի եղեռն եւ միջազգային աշխարհը լուռ կը մնայ… Այս բովանդակութեան մէջ սկիզբ կառնեն Խարտալեանի հարցազրոյցները այն եզիտի կիներուն հետ, որոնք վերապրած են ցեղասպանութեան ողբերգութեան ողիսականը:*

*Ամերիկայի Միացեալ Նահանգներու պետքարտուղարութիւնը 2023 օգոստոսի 3 թուակիր հաղորդագրութեամբ կը նշէ եզիտիներու դէմ գործուած ցեղասպանութիւնը, հաստատելով, որ ԻԼԻՊ-ը առեւանգած եւ սպանած է հազարաւոր եզիդիներ՝ ստիպելով մանուկներուն դառնալ զինեալ, իսկ կանանց ու աղջիկներուն ենթարկած սեռական ստրկութեան:*

*«Inside Her Inside Me, A Tale of Three Yazidi Women» փաստավաւերագրական ժապաւէնը կը սկըսի 2016-ին կայացած եզիդի Դալալի հետ հանդիպումով: Խարտալեան կը պեղէ Դալալի զոհի հոգեվիճակը եւ կը յայտնաբերէ, որ այն ինչ որ Դալալի ցեղասպանական փորձառութիւնն է՝ իր եղեռնախոց ժառանգի իրավիճակն է: Գոյութենական հասկացութեան բոլոր շերտերը ճեղքելով՝ բեմադրիչը կընդլայնէ զոհի զգայարանային ըմբռնումի (perception) շըրջագիծը, ցեղի մը անէացման եւ միւս ճակատագրակից ժողովուրդի պատմութեան հետ առընթեր:*

*Ականատեսներու վաւերագըրականութիւնը փաստագրելու գործընթացին մէջ, բեմադրիչը ձեռք կերկարէ զոհերուն եւ տրամախօսութեան հաղորդակից պահերը կը ստեղծէ, որու ընթացքին ծալքծալք կը բացին եզիդիներու խաչելութեանց պատումները: Սինճարի 7500 եզիդի կիներու ստրկացումն ու բռնաբարումը կը համապատասխանէ Հայոց Ցեղասպանութեան կիներու դէմ գործուած բռնութեանց արհաւալից աբարին: Վերապրող Լամիան՝ Քոչու գիւղէն է: ԻԼԻՊ-ի ահաբեկիչները գիւղը գրաւելով եզիդիներուն երեք օրուան պայմանաժամ կու տան իսլամադաւան դառնալու: Եզիդիները կը մերժեն: 2014 թուականի օգոստոսի 15-ին կը սկսի Քոչի սպանդը: 600 տղամարդ կը գըլխատուին, իսկ հարիւրաւոր երեխաներ եւ կիներ կը գերեվարուին: Լամիայի տարագրութեան, խոշտանգման եւ ապա փախուստի ճանապարհի պատմութիւնը՝ սըրտակեղեք է եւ սահմռկեցուցիչ:*

*Ականատեսի հետ հարցազրոյցի ընթացքին, Հայոց Ցեղասպանութեան հետ կապուած բեմադրիչի անձնական վերյուշները կը ցայթին պաստառին վրայ: Երկու տասնամեակ առաջ, բեմադրիչ Խարտալեան խիզախութիւնը ունեցաւ յայտնաբերելու եւ հանրութեան յանձնելու իր մեծ մօր ցեղասպանութեան ժամանակահատուածին ողիսականին նուիրուած «Մեծ մօր դաջուածքները» վաւերագրական ժապաւէնը, ուր Խարտալեան յանդգնօրէն ծալքերը կը բանայ անձնական հոգեխոցի մը ու կը ներկայացնէ վերապրող իր հարազատ մեծ մօր խոցոտուած հոգեկան ներաշխարհն ու պատմութիւնը:*

*Պատմական յիշողութիւնը վառ պահելու համար Խարտալեանի ազդու զէնքը՝ բեմադրիչի իր ոսպնեակն է. Սիւզանի վաւերագրական ստեղծագործական միտքը կը ծաւալի պաստառին վրայ, եւ 21-րդ դարու քաղաքակիրթ մարդկութեան դիմաց վերստին կը բացայայտէ ցեղասպանութեան զոհ եզիդիներու անպատմելի մըղձաւանջները, բռնաբարութիւնը, կորուստը, կսկիծը, անհատի իրաւունքի ոտնահարումը, բռնի կրօնափոխութիւնը, եւ այլ տիպի հոգեկան կոտտանքներ ու մորմոքներ, որոնք ցկեանս պիտի հալածեն զոհը, վերապրողն ու բըռնադատուածը:*

*ԻԼԻՊ-ի ահաբեկիչներու կողմէ եզիդիներու ցեղասպանութեան, եզիդի կանանց առեւանգման, բըռնաբարութեան մասին վաւերագըրելով, Դալալի, Ղասունի եւ Լամիայի վկայութիւններով բեմադըրիչը պատմական յիշողութեան կամուրջը կը կառուցէ ճակատագըրակից հայ եւ եզիդի ազգերու դժնդակալից պատմական ողբերգութեանց: 5 տարի Գերմանիոյ մէջ արխիւագրելով եզիտուհիներու ցեղասպանութեան արհաւիրքի եւ եզիտի դեռատի աղջիկներու սեռական ստրկութեան սահմռկեցուցիչ պատմութիւնները, Խարտալեան կը վերակենդանացնէ Հայոց Ցեղասպանութեան ընթացքին իր ազգին ու գերդաստանի նահապետուհիին հանդէպ կատարուած եղեռնագործութիւնները՝ եզիդուհիներու վկայութեանց ընդմէջէն:*

*Ցեղային բնաջնջումը, սպանդն ու սեռային ստրկութիւնը՝ ազգերու կենսագործունէութեան սպառնալիքներն են: Խարտալեանի փաստավաւերագրական վկայութիւնը սուր ահազանգող ղօղանջ է համայն քաղաքակիրթ մարդկութեան, որ անպատիժ մնացած ցեղասպանութիւններու հետեւանքը՝ նոր ցեղասպանութիւններն են ու քաղաքակիրթ մարդկութեան անջնջելի խարանը:*

*2012 թուականի Ապրիլին կը մահանար Խարտալեանի «Մեծ մօր դաջուածքները» ֆիլմի վկաներէն՝ 105-ամեայ Մարիա Վարդանեանը: 1915-ին, յանցագործներն ու բըռնակալները դաջուածքներ դրոշմած էին Մարիային եւ իր նման 300.000 այլ գերեվարուած հայուհիներու մարմիններուն՝ դէմքերուն եւ ձեռքերուն վրայ: Մարիայի մահուան առիթով, Խարտալեան գրած էր. «Հպարտ հայուհի, ուժեղ կին, որ քաջութիւնն ունեցաւ ըսելու այն ինչ որ կարելի չէր ըսել, պատմել: Պատմեց ու պատգամեց երբեք չմոռնալ, երբեք…»:*

*Երբեք…*

***

*Սիւզան Խարտալեանի վաւերագրական միւս ֆիլմերն են.*

*Back to Ararat (1988); Unsafe (Ground 1993); The Lion from Gaza (1996); Her Armenian Prince (1997); From Opium to Chrysanthemums (2000); Where Lies My Victory (2002); I Hate Dogs (2005); Bullshit (2006); Young Freud in Gaza (2009); Grandma's Tattoos (2012); The Camel (2014); The Other Jerusalem (2017).*

**Վահագն Գարագաշեան**

**«Հորիզոն»**

# Տեղի է ունեցել «Նռան գոյն»-ը պարային ներկայացման առաջնախաղը Թբիլիսիի «Ռուսթաւելի» թատրոնում





*ՀՀ ԿԳՄՍ նախարարութեան, Վրաստանում Հայաստանի եւ Ֆրանսիայի դեսպանութիւնների, Ֆրանսիական ինստիտուտի աջակցութեամբ Թբիլիսիի «Ռուսթաւելի» թատրոնում կայացել է Սերգէյ Փարաջանովի ծննդեան 100-ամեակին նուիրուած «Նռան գոյն»-ը հայ-ֆրանսիական պարային բեմադրութեան առաջնախաղը:*

*ԿԳՄՍՆ-ից News.am-ին յայտնում են, որ ներկայացումը նուիրուած է Սերգէյ Փարաջանովի ծննդեան 100-ամեակին եւ ընդգրկուած է յոբելեանական միջոցառումների ծրագրում:*

*Ներկայացմանը հետեւել են դեսպանները, դիւանագէտներ, բարձրաստիճան պաշտօնեաներ:*

*«Նռան գոյն»-ը ներկայացումը ջերմ ընդունելութիւն է գտել հանդիսատեսի կողմից՝ արժանանալով յոտնկայս ծափահարութիւնների եւ բուռն արձագանգի:*

*Բեմադրութեան հեղինակը Ֆրանսիայում յայտնի պարուսոյց Մուրադ Մերզուկին է: Գաղափարի հեղինակը Ֆրանսիայում գործող «Սաթէ–Աթըր» թատերական միութեան գեղարուեստական ղեկավար Սաթէ Խաչատրեանն է: Բեմադրութեան երաժշտութիւնը գրել է «Հող արթուն» խումբը, իսկ բեմական հագուստների ձեւաւորումն իրականացրել է Էդգար Մանուկեանը: Ներկայացմանը ներգրաւուած 7 պարողներից երկուսը հրաւիրուած են Հայաստանի Հանրապետութիւնից:*

**News.am**

# Մահացել է աշխարհահռչակ դիզայներ Ռոբերտօ Կաւալլին

*83 տարեկանում մահացել է աշխարհահռչակ իտալացի դիզայներ Ռոբերտօ Կաւալլին, այս մասին յայտնում են Roberto Cavalli բրենդի ինստագրամեան էջում:*

*«Մեծ վշտով այսօր մեր վերջին հրաժեշտն ենք տալիս մեր հիմնադրին՝ Ռոբերտօ Կաւալլիին: Ֆլորենսիայում իր համեստ ուղուց՝ Ռոբերտօն հասաւ յաջողութեան՝ դառնալով համաշխարհային անուն, որը սիրուած էր ու յարգուած բոլորի կողմից: Բնատուր տաղանդով ու ստեղծագործականութեամբ օժտուած Ռոբերտօն կարծում էր, որ իւրաքանչիւրը կարող է բացայայտել իր ներսի արտիստին: Ռոբերտօ Կաւալլիի ժառանգութիւնը կապրի նրա կրեատիւութեան, բնութեան հանդէպ սիրոյ եւ նրա ընտանիքի շնորհիւ, որոնց նա պաշտում էր»,- ասուած է հաղորդագրութեան մէջ:*



*Նորաձեւութեան դիզայներն ունէր վեց երեխայ. վերջինը՝ որդին՝ Ջորջիօն, ծնուել է 2023 թուականին, երբ դիզայները 82 տարեկան էր:*

*Կաւալլին ծնուել է 1940 թուականին՝ Ֆլորենցիայում: Նա ընդունուել է Արուեստի ակադեմիա, որտեղ սովորել է ինտերիերի դիզայն, երբեք դիպլոմ չի ստացել, բայց սկսել է աշխատել տեքստիլով: Դիզայները 1970-ականներին հիմնել է իր սեփական ապրանքանիշը՝ Roberto Cavalli-ն:*

# «Արցախի կանայք հայկական հիմնախնդիրների մասին, աղէտի եւ պայքարի պատմութիւններ» խորագրով պանելային քննարկում







«Հայկական առաքելութիւն» բարեգործական հիմնադրամը ս. թ. ապրիլի 7-ին կազմակերպել է «Արցախի կանայք հայկական հիմնախնդիրների մասին. աղէտի եւ պայքարի պատմութիւններ» խորագրով պանելային քննարկումը: Բացման ողջոյնի խօսքում հիմնադրամի տնօրէն Սիրանուշ Սաաթրեանը շնորհաւորել է ներկաներին մայրութեան եւ գեղեցկութեան տօնի առթիւ՝ ցանկանալով, որ իրենց ուժն ու պայքարի ոգին փոխանցւի բոլոր հայ կանանց ու մայրերին դրանով իսկ նպաստ բերելով վերստին ազատ Արցախ ունենալու բոլորիս մեծ գործում:

Պանելային քննարկման ժամանակ բանախօսել են լրագրողներ Ծովինար Բարխուդարեանը, Աննա Մանգասարեանը, Ալինա Աղաբաբեանը, Հադրութի շրջանի վարչակազմի աշխատակազմի երիտասարդութեան եւ մշակոյթի հարցերի բաժնի վարիչ Երազիկ Հայրիեանը, ԱՀ եւ ՀՀ նախկին պետական ծառայող, ներկայումս՝ քաղաքացիական ակտիւիստ Արեգա Յովսէփեանը:

Բանախօսները պատմել են շրջափակման, պատերազմի եւ բռնի տեղահանութեան ժամանակաշրջանի դժուարութիւնների, դրանք վերապրելու եւ յաղթահարելու պատմութիւնների մասին: Անդրադարձ է եղել նաեւ առհասարակ Հայաստանի եւ Արցախի, ինչպէս նաեւ արցախցիների ներկայիս սոցիալ-մշակութային հիմնախնդիրներին եւ դրանց լուծման միջոցներին՝ յատուկ ընդգծելով կանանց դերի նշանակութիւնը:

Զուգահեռներ են տարել նաեւ մեր օրերի եւ 1990-ականների պայքարի ու արցախցիների տոկունութեան միջեւ՝ արձանագրելով, որ վերջնական յաղթանակի հանդէպ հաւատը յաղթանակն ապահովող կարեւոր պայման է: «Եթէ ես յոյսը չունենամ, որ մի օր գնալու եմ Արցախ՝ մեր տուն, եղբայրական գերեզման, Շուշի, ես պարզապէս կը դադարեմ ապրել»,- նշել է բանախօսներից Ա. Յովսէփեանը:

Ա. Աղաբաբեանն իր ելոյթում, ի շարս պատերազմի ականատես լինելու անձնական ապրումների ներկայացման, անդրադարձել է նաեւ Հայաստանի սահմանների եւ տարածքների ներկայիս վտանգւածութեանը, ինչպէս նաեւ երկարաժամկէտ եւ տեւական յաղթանակի համար իշխանութեան փոփոխութիւնից բացի՝ նաեւ բնակչութեան զանգւածային ոգեփոխութեան եւ ճգնաժամային տոկունութեան բարձրացման հարցերին:

Ե. Հայրիեանն յիշատակել է արցախեան ինքնատիպ ենթամշակոյթի, այդ թւում՝ բարբառների ու խօսւածքների վտանգւածութեան հարցը: Ծաւալւած քննարկման ընթացքում ներկաները կիսւել են պատմութիւններով, որ ՀՀ ներկայիս իշխանութիւնները խոչընդոտում են արցախցիների՝ միասին համախումբ բնակւելու եւ դրա միջոցով սեփական խմբային դիմագիծն ու ենթաինքնութիւնը պահելու փորձերը:

«Հայկական առաքելութիւն» հիմնադրամն ակտիւ գործունէութիւնն սկսել է 2023 թ. սեպտեմբերին՝ Արցախի ժամանակաւոր հայաթափման օրերից: Կազմակերպութեան գործունէութիւնն ուղղւած է բռնի տեղահանւած արցախցիներին տարաբնոյթ աջակցութեան ցուցաբերմանը: Հիմնադրամի գործունէութեան կարեւորագոյն սկզբունքներից մէկն իրականացւող ծրագրերի աստիճանական ընդլայնումն է ու դրանց շարունակականութեան ապահովումը: Մինչ այս պահը «Հայկական առաքելութիւն» հիմնադրամն աջակցել է 1500 արցախցու, որից 406-ը՝ երեխաներ, աշխատանքով ապահովել 5 ընտանիքի, կազմակերպել 31 մասնագիտական դասընթաց եւ ամանորեայ 2 միջոցառում:

**Yerkir**

# Պատերազմի օրերին 3 երեխաներիցս 2-ին թողնում էի տանը, որ գոնէ ընտանիքիս մի մասը ողջ մնար. աղէտի ու պայքարի պատմութիւններ



ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Քրիստինէ Վարդանեանը ներկայացրել է «Հայկական առաքելութեան» կազմակերպած միջոցառումից դրւագներ, նշելով՝

««Պատերազմի ժամանակ 3 երեխաներիցս 2-ին թողնում էի տանը, մէկին վերցնում էի հետս: Մտածում էի, որ եթէ յանկարծ որեւէ մէկիս բան լինի, գոնէ ընտանիքի մի մասը ողջ մնայ: Բայց չնայած այս զգացողութիւններին, ես գիտակցում եմ, որ պայքարին այլընտրանք չկայ»:

Լսում եմ Ալինա Աղաբաբեանի պատմութիւնը պատերազմի ընթացքում իրենց ընտանիքի վերապրածի մասին:

«Երբ Արցախում էինք, երեխաս ասում էր գնամ դրսում սովորեմ: Հիմա, երբ Հայաստանում ենք, անընդհատ հարցնում է՝ երբ ենք ետ Արցախ գնալու»:

Սա էլ Ծովինար Բարխուդարեանի արձանագրումն է Արցախ վերադարձի քննարկման ուղղութեամբ աշխատելու համատեքստում:

Գլուխս շրջում ու ներքեւ եմ նայում, Տաթեւիկ Վիրաբեանն է՝ Արցախում ապրած կին, ում ընտանիքի մի մասը սեպտեմբերեան դէպքերին դեռ Արցախում էր ու Տաթեւը ցոյցի էր դուրս եկել, որովհետեւ չգիտէր ուրիշ ինչ կարող է իր ընտանիքի համար անել այդ պահին: Իսկ Տաթեւի ոտքին տեղաշարժը հսկող սարքն է, որովհետեւ այդ ցոյցերի արդիւնքում Տաթեւը 2 ամսով կալանաւորւեց ու հիմա ընթանում է իր դատավարութիւնը:

Այսօր առաւօտեանից արցախցի ու Արցախի հետ ամուր կապերով կապւած կանանց պատմութիւններն եմ լսում պատերազմի, բլոկադայի, Արցախից բռնի տեղահանութեան մասին:

Ու չնայած մեր դեռեւս չընդհատւող պարտութիւնների շղթային, բոլոր այս կանայք իրենց օրինակով ցոյց են տալիս, որ մարդը կարող է յաղթել անյաղթելի թւացող երեւոյթներին:

Ահա այսպիսի ապրիլի 7:

Շնորհակալութիւն Հայկական առաքելութիւն-ը կազմակերպած միջոցառման համար: Հայկական նախագիծ / Armenian Project»:

Յիշեցնենք՝ «Հայկական առաքելութիւն» բարեգործական հիմնադրամը մայրութեան եւ գեղեցկութեան տօնի առթիւ կազմակերպում է «Արցախի կանայք հայկական հիմնախնդիրների մասին. աղէտի եւ պայքարի պատմութիւններ» թեմայով պանելային քննարկում:



## Արծւիկ Մինասեան. «Առանց հանրաքւէի Հայաստանից որեւէ տարածք չի կարող փոխանցւել»

Իշխանութիւնը խօսում է խորհրդային սահմանների մասին, բայց Ադրբեջանը ընդունո՞ւմ է այդ սահմանը: Այս մասին ապրիլի 12-ին, ՀՀ ԱԺ-ում լրագրողների հետ զրոյցում նշել է ՀՅԴ անդամ, ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցութեան քարտուղար Արծւիկ Մինասեանը:

«Բա որ ընդունում է, ինչո՞ւ է կրակում: Կամ դուք ծանօ՞թ էք Ադրբեջանի Սահմանադրութեանը, իրենց անկախութեան փաստաթղթերին: Այնտեղ գրւած է խորհրդային սահմա՞ն: Հակառակը, Ադրբեջանը հրաժարւել է ԽՍՀՄ պայմանագրերից: Ալիեւն ասաց՝ Ալմա-Աթայի հռչակագրին համաձայն եմ, երբ պէտք էր իրեն Արցախը զաւթելու, նւաճելու համար: Հիմա ինչո՞ւ չի տալիս Ալմա-Աթայի անունը: Ալմա-Աթայի փաստաթուղթը որեւէ իրաւական հիմք չէ, իրաւական հիմքը այն արձանագրութիւնն է, որը Ադրբեջանը պաշտօնապէս իր համար գործողութեան մէջ է դրել 1993-ի սեպտեմբերի 24-ից: Այդ արձնագրութեան երկրորդ մասում յստակ ասւած է, որ երկրների համար այս համաձայնագրի կէտերը կողմերի համար ուժի մէջ են մտնում պաշտօնապէս անդամակցելու պահից: Ըստ այդմ, եթէ Նիկոլ Փաշինեանն Ալմա-Աթայի հռչակագիրն է հիմք ընդունում, 1993 թւականի սեպտեմբերի 24-ի դրութեամբ հաստատւած շփման գիծը պէտք է լինի սահմանազատման հիմքը, եւ դա հիմք ընդունելով դու պէտք է կատարես ճշգրտումներ»,- ասաց նա:

Արծւիկ Մինասեանի խօսքով՝ ՀՀ ինքնիշխան իրաւազօրութեան տակ գտնւողն տարածքները նրանք են, որոնք 1993-ի սեպտեմբերի 24-ի դրութեամբ այդ տարածքներում գործել է ՀՀ օրէնքը, եւ երկրորդ, բոլոր այն տիտղոսները՝ Արծւաշէնի, Հայաստանի բռնազաւթւած այն տարածքների նկատմամբ, որոնք խորհրդային ժամանակահատւածում պատկանել են Հայաստանին»:

Պատգամաւորը յստակեցրել է, որ առանց հանրաքւէի ՀՀ գործող իշխանութիւններն իրաւասու չեն որեւէ տարածք փոխանցելու Ադրբեջանին:

**News.am**



## Միեր Մելքոնեան. «Փաշինեանը հայ ժողովրդի եւ մեր անկախ պետականութեան «դատավճիռն» է»

Փաշինեանը հայ ժողովրդի եւ մեր անկախ պետականութեան «դատավճիռն» է: Այս մասին ֆէյսբուքեան իր էջում գրել է ՀՅԴ Շիրակի Մարզային կոմիտէի ներկայացուցիչ, ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Միեր Մելքոնեանը:

«Հայաստանի Հանրապետութեան գործող ղեկավարութիւնը համակարգւած կերպով փորձում է ոչնչացնել այն ամէնը, ինչը դարերի ընթացքում ստեղծել է հայ ժողովուրդը:

Սկզբում՝ մեր յաղթանակած բանակը, ազգային արժէքներն ու աւանդոյթները, մշակոյթն ու հայկական ընտանիքը:

Յետոյ՝ հաւատը՝ թիրախաւորելով Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին եւ փոխարէնը առաջարկելով այն, ինչը կեղծ է եւ հակազգային:

ՔՊ-ական խմբակը փորձում է մեզանից խլել մեր պատմութիւնը՝ խեղաթիւրելով փաստերը եւ յօրինելով ինչ-որ նոր իրադարձութիւններ:

Հիմա էլ նրանց թիրախում է յայտնւել պատմական Հայաստանը…:

Ակնյայտ է, որ այս ամէնն արւում է թշնամիներին հաճոյանալու եւ սեփական իշխանութիւնը պահելու համար:

Պարզ է, որ գործող իշխանութեան շատ ներկայացուցիչներ, ըստ երեւոյթին, այս կերպ փորձում են կայանալ: Բայց նրանց ընտրած ճանապարհը սխալ է: Աւելին՝ վտանգաւոր ու կործանարար:

Նման ապազգային քայլերը երբեք չեն մոռացւի: Ժողովուրդը, որից փորձում են խլել ազգային ինքնութիւնը, պատմութիւնը, եկեղեցին, լեզուն, մշակոյթը երբեք չի ների նրանց…:

Այնուամենայնիւ, տեղին է հիշել ռուսական ժողովրդական իմաստութիւնը. «Դաւաճանը փոթորիկի ժամանակ մտածում է միայն փրկել սեփական կաշին»:

ՄԱՐԶԱԿԱՆ

# Ֆանտաստիկ մարդ է եւ հիանալի խաղացող. «Ինտեր»-ի մարզիչը կրկին գովել է Հենրիխ Մխիթարեանին



«Ինտեր»-ի գլխաւոր մարզիչ Սիմոնէ Ինձագին հերթական անգամ բարձր է գնահատել Հայաստանի հաւաքականի նախկին աւագ եւ «Ինտեր»-ի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանի խաղը՝ այս անգամ «Ուդինեզէ»-ի նկատմամբ տարած յաղթանակից յետոյ: Դաւիդէ Ֆրատտեսիի գոլը խաղի վերջին րոպէներին օգնեց «Ինտեր»-ին յաղթանակ կորզել (2:1): Այժմ առաջնութիւնը կրկին նուաճելու համար թիմին անհրաժեշտ է 7 խաղում վաստակել ընդամէնը 8 միաւոր, այսինքն՝ տիտղոսը կարելի է ապահովուած համարել:

Մարզիչը նշել է, որ Հենրիխ Մխիթարեանն աչքի ընկաւ արդիւնաւէտ խաղով ամբողջ խաղի ընթացքում, յատկապէս կարեւոր էր, երբ նետուեց պաշտպանութեան ու խանգարեց «Ինտեր»-ի դարպասապահի դէմ դուրս եկած Ֆլորիան Թովենին:

Eurosport-ի վարկածով Հենրիխ Մխիթարեանը ճանաչուել է հանդիպման լաւագոյն ֆուտբոլիստ:

Ինչպէս նշում է իտալական ezdni One Football-ը, Մխիթարեանը նաեւ մեծ ծաւալի աշխատանք է կատարել յարձակման գծում՝ ստեղծելով երկու իրական գոլային պահեր Լաուտարո Մարտինեսի եւ Դիմարկոյի համար:

Նա շատ փոխանցումներ է կատարել դաշտի կենտրոնից դէպի յարձակում, ընդորում՝ յարձակման գծի համար նրա ճշգրտութիւնը շատ բարձր է եղել (93%):

Բացի այդ, չնայած տարիքին, Մխիթարեանն աչքի է ընկել մեծ շարժունակութեամբ եւ լաւ վազքով:

Yerkir.am

ՖԻՖԱ-ի նախագահ.

# «2030 թւականի աշխարհի առաջնութիւնը կը միաւորի ամբողջ աշխարհը»



ՖԻՖԱ-ի նախագահ Ջանի Ինֆանտինոն կարծում է, որ 2030 թւականի աշխարհի առաջնութիւնը կը միաւորի ամբողջ աշխարհը: Մրցաշարը տեղի կունենայ Արգենտինայում, Իսպանիայում, Մարոկկոյում, Պորտուգալիայում, Պարագւայում եւ Ուրուգւայում: Հարաւային Ամերիկայի երկրները կընդունեն միայն առաջին երեք խաղերը: Պարագւայում CONMEBOL-ի կենտրոնակայանում տեղի ունեցած միջոցառման ժամանակ ֆունկցիոները յայտարարել է:

«2030 թւականի աշխարհի առաջնութիւնը կը լինի իւրօրինակ մի բան, դա կը լինի հարիւրամեակին նուիրուած աշխարհի առաջնութիւն: Դա կը լինի աշխարհի առաջնութիւն, որն իսկապէս կը միաւորի աշխարհը:

Երբ մենք սկսեցինք խօսել 2030 թւականի մասին, ինձ համար պարզ դարձաւ, որ մենք պէտք է ինչ-որ իւրայատուկ բան մտածենք, քանի որ բոլորս պէտք է յիշենք ֆուտբոլի պատմութիւնը»,- Ինֆանտինոյի խօսքն է մէջբերել FIFA-ի մամուլի ծառայութիւնը:

Tert.am



# 13 տարի անց յաղթանակ տօնեցինք՝ ՀՀ ֆուտբոլի կանանց հաւաքականը յաղթել է Բուլղարիայի թիմին

Կանանց Հայաստանի ազգային հաւաքականը պատմական յաղթանակ է տօնել: Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան յայտնում է, որ մեր թիմն արտագնայ խաղում յաղթել է Բուլղարիայի ընտրանուն:

«13 տարի անց տօնեցինք առաջին յաղթանակը պաշտօնական խաղում»,- տեղեկացնում են ֆեդերացիայից:

Նշենք, որ հաւաքականը Բուլղարիայի հանդէպ յաղթանակ է տօնել 2:3 հաշւով:

Աւելի վաղ՝ ապրիլի 5-ին, Հայաստանի հաւաքականը 2025 թ. Եւրոպայի առաջնութեան ընտրական մրցաշարի խաղում Արմաւիրում պարտուեց Ռումինիայի հաւաքականին 0:1 հաշւով:

Yerkir.am

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

# Ինչ փոփոխութիւններ տեղի կունենան մարդու օրգանիզմում ընդամէնը մէկ շաբաթով շաքարից հրաժարուելու դէպքում



Մասնագէտները ներկայացրել են 10 փոփոխութիւն, որոնք տեղի են ունենում մարդու օրգանիզմում ընդամէնը մէկ շաբաթով շաքարից հրաժարուելու դէպքում, գրում է յունական Pronews.gr կայքը:

Շաքարը պարունակւում է սննդամթերքի մի շարք տեսակներում, յատկապէս վերամշակւում անցած մթերքում, ինչպիսին են սոուսները, կիսաֆաբրիկատները, պահածոյացուած մրգերը եւ այլն: Չնայած այն բանին որ շաքարն օրգանիզմի համար էներգիայի աղբիւր է հանդիսանում, դրա չարաշահումը կապուած է ճարպակալման, սրտանօթային հիւանդութիւնների ու առողջական մի շարք այլ խնդիրների զարգացման հաւանականութեան բարձրացման հետ:

Սննդակարգից շաքարի բացառումն անգամ կարճ ժամանակով դրական ազդեցութիւն է ունենում օրգանիզմի վրայ: Մասնաւորապէս, մարդն ազատւում է մոռացկոտութիւնից ու աւելի հեշտ է կենտրոնանում առաջադրաքների վրայ: Բացի այդ, շաքարի գործածութեան կրճատումը նւազեցնում է նաեւ երկրորդ տիպի շաքարային դիաբետի զարգացման, բշտիկների առաջացման, բերանի խոռոչի տհաճ հոտի, ինչպէս նաեւ հորմոնալ դիսբալանսի վտանգը:

Շաքարի գործածութիւնը կապուած է նաեւ դեպրեսիայի զարգացման բարձր վտանգի հետ, մինչդեռ դրանից հրաժարուելը բարելաւում է հոգեկան առողջութիւնն ու իմունային համակարգը:

Սննդակարգում շաքարի քանակութեան նւազեցումը նաեւ նպաստում է մաշկի աւելի դանդաղ ծերացմանն ու բարելավում է բերանի խոռոչի առողջութիւնը: Բացի այդ, շաքարի սահմանափակումը կարող է բարձրացնել լիբիդոն ու դրական ազդեցութիւն ունենալ սեռական կեանքի վրայ:

Tert.am

# Գիտնականները յայտնաբերել են մարդկանց տեսողական ընկալման արագութեան տարբերութիւններ

Դուբլինի Թրինիտի-կոլէջի հետազօտողները յայտնաբերել են, որ մարդիկ խիստ տարբերւում են տեսողական ազդանշանների ընկալման արագութեամբ: Ոմանք արագ են ընկալում փոփոխւող տեսողական ազդանշաններն այնպիսի յաճախականութեամբ, որոնք անհասանելի են միւսներին, այլ խօսքով՝ ոմանք աւելի մեծ քանակութեամբ տեսողական տեղեկութիւն են ստանում ժամանակի որոշակի միջակայքում, քան միւսները:

Հետազօտութեան արդիւնքները հրապարակուել են PLOS One ամսագրում:

Այս յայտնագործութիւնը վկայում է այն մասին, որ ոմանք ունեն բնածին առաւելութիւն որոշակի իրավիճակներում, երբ ռէակցիայի ժամանակն ունի վճռական նշանակութիւն, օրինակ՝ գնդակով մարզական մրցումներում:

Արագութիւնը, որով մենք ընկալում ենք աշխարհը, յայտնի է որպէս մեր «ժամանակային ընկալունակութիւն» եւ շատ բանով նման է համակարգչային մոնիտորի թարմացման յաճախականութեանը:

Գիտնականները պարզել են, որ տարբեր մարդիկ այս հարցում տարբերութիւններ ունեն, իսկ դա նշանակում է, որ ոմանք փաստօրէն «վայրկեանում աւելի շատ պատկերներ» են տեսնում, քան միւսները:

Գիտնականներն օգտագործել են «շողարձակումների միաձուլման կրիտիկական շեմը՝ յաճախականութեան առաւելագոյն ցուցիչը, որի դէպքում մարդը կարող է ընկալել լոյսի շողացող աղբիւրը:



«Մենք առայժմ չգիտենք, թէ ինչպէս են այդ տարբերութիւններն ազդում մեր առօրեայ կեանքի վրայ, բայց կարծում ենք, որ անհատական տարբերութիւններն ընկալման արագութեան մէջ կարող են դրսեւորուել այն իրավիճակներում, որոնք կապուած են բարձր արագութեան, հետ, երբ կարող է պահանջուել որոշել արագ շարժւող օբիեկտի գտնուելու տեղը կամ արագ հետեւել դրան, օրինակ՝ գնդակով մարզախաղերի ժամանակ: Դա վկայում է այն մասին, որ ոմանք կարող են առաւելութիւններ ունենալ միւսների հանդէպ մինչ այն պահը, երբ կը հաւածեն գնդակին կամ կը վերցնեն կոնտրոլիորն ու կը մտնեն մի ինչ-որ ֆանտաստիկ օնլայն-աշխարհ»,- նշել են հետազօտողները:

NEWS.am

## ՎՇՏԱԿՑՈՒԹԻՒՆ

Այսու անձնապէս եւ յանուն մեր Պատգամաւորական ժողովի, Թեմական, Կրօնական խորհուրդների եւ ողջ ժողովականութեան խորազգաց ցաւակցութիւն ենք յայտնում՝ Արժ. Տ. Սահակ քհնյ. Խոսրովեանին, Խոսրովեան եւ Մովսիսեան ընտանիքներին եւ միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր ու անփոխարինելի կորստի՝

**ՏԻՐԱՄԱՅՐ՝**

**ԹԱԳՈՒՀԻ ՄՈՎՍԻՍԵԱՆԻ**

**(ԽՈՍՐՈՎԵԱՆ)**

ցաւալի մահուան առթիւ:

Աղօթում եւ մաղթում ենք, որ Աստուած Իր լոյսերի մէջ հանգչեցնի նորոգ հանգուցեալի հոգին եւ իր հարազատներին Ս. Հոգու մխիթարութիւն պարգեւի:

**ՍԵՊՈՒՀ ԱՐՔ. ՍԱՐԳՍԵԱՆ**
**ԱՌԱՋՆՈՐԴ ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ**

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Այսու մեր խորին շնորհակալութիւններն ենք յայտնում՝ Թեհրանի հայոց թեմի բարեխնամ առաջնորդ՝ Գերշ. Տ. Սեպուհ Ս. արք. Սարգսեանին, Հ. Մ. «Արարատ» կազմակերպութեանը, «Ալիք» հաստատութեանը, կառոյցներին եւ բոլոր ազգական-բարեկամներին, ծանօթներին, ընկեր-ընկերուհիներին, ովքեր անձամբ, հեռախօսով ու մամուլի միջոցով՝ վշտակցեցին մեզ, մեր կրած ծանր եւ անփոխարինելի կորստի, մեր շատ սիրելի՝

**ՀՐԱՉ**

**ԶԱՐԻՖԵԱՆԻ**

ցաւալի մահուան առիթով:

**ԶԱՐԻՖԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ**

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Օժանդակելու համար օրաթերթիս՝ կարող էք ձեր հին թղթերը յանձնել

**«Ալիք» օրաթերթին՝ առաւօտեան ժամը 8-ից մինչեւ ժամը 20:00-ը**

(Մեծ քանակութեան պարագայում՝ նախապէս համադրելու խնդրանօք)՝ հետեւեալ հասցէով.

Հիւսիսային Սոհրեւարդի պող., Մոհեբի փողոց, համար 16
Հեռ.՝ 88761154

**«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ**

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

**Այսու տեղեկացնում ենք, որ «Արարատ» մարզաւանի բացօթեայ ընթրիքները վերսկսելու նպատակով, համագործակցութեան են հրաւիրում խոհանոցային կապալառուներ եւ վարձակալներ, հետեւեալ բաժինների աշխատանքների համար՝**

- Խորոված եւ տաք ուտեստներ
- Պիցցա
- Սալաթ բար
- Սանդւիչ բար
- Գետնախնձոր բար
- Քաֆի շափ

Թեկնածուներից խնդրում ենք աշխատանքային օրերում, ժամը 9:00-ից 15:00-ը դիմել «Արարատ» մարզաւանի գրասենեակ:
Հնարաւոր է նաեւ աշխատանքային ռեզումէն յղել՝
info@araratorg.org էլ-հասցէին
կամ 09912708497 WhatsApp-ի համարով:
Յաւելեալ տեղեկութիւնների համար կապւել 88030224-7 հեռախօսահամարներով:

www.araratorg.org
telegram.me/araratorg
instagram/Ararat_organization

**Հ. Մ. «ԱՐԱՐԱՏ» Կ.**


**ԱԼԻՔ** Օրաթերթ

Արտօնատէր՝ ԱԼԲԵՐՏ ԱՃԵՄԵԱՆ
Հեռախօս՝ (0098-21) 88768567 - 88761154
Հեռապատճէն՝ 88760994
Փոստարկղ՝ 11365-953 Թեհրան - Իրան

آلیک
روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶
کدپستی: ۱۵۵۸۸۳۳۹۱۱
تهران صندوق پستی: ۹۵۳-۱۱۳۶۵ فاکس: ۸۸۷۶۰۹۹۴
تلفن: ۸۸۷۶۱۱۵۴ – ۸۸۷۶۸۵۶۷ چاپخانه آلیک

ALIK ARMENIAN DAILY
Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,
Tehran 1558833911, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 -88761154
Fax: 88760994

E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir



ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ
ԼՒԱՑՔԻ ԵՒ ԱՄԱՆ ԼՒԱՑՈՂ
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ՝
ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Հեռ. 26320084 եւ 09124187835,
Վահիկ Իսկանդարեան



Computer AGMA
Համակարգչային ընկերութիւն
خرید و فروش کامپیوتر | سخت افزار
ارتقاء سیستم | نرم افزار
سرویس در محل | شبکه
Tel: 88849305 & 88842385
ایرانشهر شمالی، کوچه نوشهر، پلاک ۳۲، واحد ۶



ԱԼԻՔ-ի
Internet-ային էջն է՝
www.alikonline.ir


## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՐԱՒԷՐ

Հ. Մ. «Արարատ» կազմակերպութիւնն իր աշխատակազմը լրացնելու նպատակով աշխատանքի է հրաւիրում հետեւեալ անձանց՝

- **Դրամարկղի պատասխանատու** (صندوقدار)
- **Սրահների պատասխանատու** (مدیر سالن عروسی و مراسم ها)
- **Սպասարկողներ** (گارسون)

Թեկնածուներից խնդրում ենք աշխատանքային օրերում, ժամը 9:00-ից 15:00-ը դիմել «Արարատ» մարզաւանի գրասենեակ:
Հնարաւոր է նաեւ աշխատանքային ռեզումէն յղել՝
info@araratorg.org էլ-հասցէին
կամ 09912708497 WhatsApp-ի համարով:
Յաւելեալ տեղեկութիւնների համար կապւել 88030224-7 հեռախօսահամարներով:

www.araratorg.org
telegram.me/araratorg
instagram/Ararat_organization

**Հ. Մ. «ԱՐԱՐԱՏ» Կ.**











## Յարգելի նիհրատու

**Շնորհակալ ենք Քո սրտաբուխ նուիրատուութեան համար:**
**«ԱԼԻՔ»-ի սիրտը բաբախում է Քո եւ սրտակից ընթերցողների շնորհիւ:**
**Այս դժւարին պայմաններում Դուք ներշնչում էք մեզ աւելի հաւատք մեր գործին եւ աշխատելու նոր եռանդ, որպէսզի «ԱԼԻՔ»-ը ամէն օր մուտք գործի Ձեր տուն:**

*Շնորհակալ ենք, որ Դուք կաք:*

Յարգանօք՝
«ԱԼԻՔ» օրաթերթի
Յայտարարութիւնների բաժին

## «ՀՀ-ի արտաքին....

(Շար. 1-ին էջից)

գործընթացում: Սա էլ խօսում է, դրա մասին, որ աշխարհը Հայաստանի դիւանագիտական փորձերը ընկալում է որպէս Թուրքիայի հետ ինտեգրում:

Մատթէոսեանի կարծիքով՝ Հայաստանը գնում է Ռուսաստանի դէմ կտրուկ գործողութիւնների, որովհետեւ Հայաստանը ինտեգրւում է թուրքական աշխարհի մէջ իր բոլոր կառուցւածքներով, եւ այսպէս կոչւած, «խաղաղութեան խաչմերուկ» նախագիծը նոյնպէս թուրքական աշխարհի տնտեսական եւ կոմունիկացիոն նախագծերի դրսեւորումներից մէկն է:

«Հիմա մենք մի համակարգում ենք ինտեգրւում, որ թուրքական է եւ հակառուսական. այդ համակարգը թշնամական է Ռուսաստանի նկատմամբ: Ճիշտ է հիմա Թուրքիան եւ Ռուսաստանը ելնելով որոշ հանգամանքներից տնտեսական սերտ կապեր ունեն բայց ակնյայտ է, որ յաջորդ կէտերից մէկը, որ Ռուսաստանը կարող է ռազմական գործողութիւններ իրականացնել, կարող է լինել Թուրքիայի հետ որոշակի առճակատումն ու այս պայմաններում ինտեգրւել թուրքական աշխարհի մէջ ինքնասպանութեան նման է»,- ասաց նա:

Մատթէոսեանը նկատեց, որ Ադրբեջանը շատ նուրբ դիւանագիտական խաղ է խաղում. նրանք այսօր հանդիսանում են տարածաշրջանում երրորդ երկրների պրոկսի ուժը: Ադրբեջանը, Իսրայէլի եւ Մեծ Բրիտանիայի պրոկսին է մեր տարածաշրջանում, որոնք օգտւելով ՀՀ-ի իշխանութիւնների ձգտումներից բանակցութիւնները ռուսական հարթակից տեղափոխում են դէպի արեւմտեան հարթակ, այդ իրավիճակից օգտւեցին եւ արդիւնքում ստացան աւելի քան հնարաւոր է. Արցախը առանց հայերի կարգավիճակ:

«Իրենք շատ լաւ են հասկանում, որ շարունակել թուրքական ինտերգումը կը նշանակի խնդիրներ ունենալ Իրանի Իսլամական Հանրապետութեան եւ Ռուսաստանի հետ»,- նշեց նա:

Ըստ քաղաքագէտի՝ ՀՀ գործող իշխանութիւնների քաղաքականութիւնը դա անմեղսունակ սխալների շարան է, ուստի ադրբեջանցիները կարողանում են շատ լաւ օգտւել այդ իրավիճակից: Նա զգուշացրեց, որ Հայաստանի պետականութիւնը կասկածի տակ է դրւել, Հայաստանի պետականութիւնը հակառուսական եւ հակաիրանական ծրագրերում ներքաշելու համար մեծ ներդրումներ է կատարւում, իսկ ՀՀ գործող իշխանութիւնները պարզապէս ընտրում են թուրքական աշխարհի մէջ ինտեգրւելու վեկտորը:

Մատթէոսեանը կարծում է, որ հայ-ադրբեջանական բանակցութիւնների միակ գործօն ֆորմատը, որին հնարաւոր է քիչ թէ շատ դրական զարգացումների յոյս ունենալ, այն մոսկովեան հարթակն է Հայաստան, Ռուսաստան, Ադրբեջան, բայց աւելի լայն տարածաշրջանային ֆորմատը, 3+3 ֆորմատով բանակցութիւններն են:

**Զրոյցը՝ ՍԻՒՆԷ ՖԱՐՄԱՆԵԱՆԻ**


ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Այսու ազգային մարմինների, հիմնարկութիւնների, միութիւնների, դպրոցների եւ ընկերութիւնների ու բոլոր յարգելի ընթերցողների ուշադրութեանն ենք յանձնում, որ իրենց

**յայտարարութիւնները օրաթերթիս յանձնեն առ. ժամը 8-ից մինչեւ կ. յ. ժամը 2-ը ամենաուշը երեք օր (աշխատանքային օր) նախքան տպագրութեան թւականը,**

բացի

**մահազդերից,**

**որոնք ընդունւում են նաեւ նոյն օրը առաւօտեան՝ մինչեւ ժամը 9-ը:**

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ



اتاق بازرگانی، صنایع، معادن و کشاورزی تهران
TEHRAN CHAMBER OF COMMERCE, INDUSTRIES, MINES AND AGRICULTURE
اتاق مشترک بازرگانی ایران و ارمنستان

همایش تجاری
توسعه همکاری‌های تجاری ایران و ارمنستان
با توجه به ضرورت‌های کنونی ژئوپلتیک شمال ایران



سید غلامرضا موسوی
مدیراجرائی
ملت‌بانک ارمنستان

بهمن عشقی
دبیرکل
اتاق بازرگانی تهران

هرویک یاری جانیان
رئیس
اتاق مشترک بازرگانی ایران و ارمنستان

اکبر گداری
سرپرست دفتر
آسیای میانه، قفقاز و روسیه
سازمان توسعه تجارت ایران

دوشنبه ۲۷ فروردین ماه ۱۴۰۳
ساعت ۱۰ صبح

لینک ثبت نام:
https://service.tccim.ir/dp?form_id=246

۸۸۷۲۱۰۴۳

اتاق بازرگانی تهران
خیابان وزرا- پلاک ۸۲



Երկու տարբեր թռիչքներ դէպի՝ Հայաստան

ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ

هواپیمایی ایران ایرتور IRAN AIRTOUR AIRLINES
هواپیمایی قشم QeshmAir

برای تهیه بلیط می توانید با
شرکت حمل و نقل بین المللی و مسافرتی ستی
۰۲۱-۸۸۵۴۱۲۴۲-۵ و ۸۸۵۴۱۲۹۸-۹ agency@sati-co.com

و در شهر اصفهان با آژانس آرمان گشت «ناربه ژاردن» ۰۹۱۳۳۰۰۸۰۲۹
و شباهنگ سیر «رافیک خداوردیان» ۰۹۱۳۳۰۵۳۸۳۵ تماس حاصل نمایید.

«ԲԱԶԷ» ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ
آژانس مسافرتی «بازه»
BAZE TOUR & TRAVEL AGENCY
Հասցէ՝ Կոմիտաս 20, բն. 22, Երեւան, Հայաստան
Հեռախօս՝ +374 965 75 305 եւ + 374 102 22 824
نشانی: خیابان کومیتاس، شماره ۲۲، ایروان – ارمنستان تلفن: ۸۲۴ ۲۲ ۱۰۲ ۳۷۴+ , ۳۰۵ ۷۵ ۹۶۵ ۳۷۴+
Address: Komitas St., Bld.20, Apt. 22 E-mail: info@bazetravel.am


## Հայոց Ցեղասպանութեան 109-րդ տարելիցին՝ Ապրիլի 24-ի առաւօտեան խուռներամ շարքերով մասնակցենք կրօնական-քաղաքական ծրագրերին

«ԱԼԻՔ», Կ. Դ. - Թ. Հ. Թ. Թեմական խորհրդի կողմից Հայոց Ցեղասպանութեան 109-րդ տարելիցը նշող Կենտրոնական յանձնախմբի նախաձեռնութեամբ, երէկ՝ ապրիլի 13-ի երեկոյեան ազգային առաջնորդարանի դահլիճում հանդիպում էր կազմակերպւել Թեհրանի հայոց թեմի միութիւնների վարչութիւնների եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու Եկեղեցական խորհրդի ներկայացուցիչների հետ կապւած Ապրիլեան ծրագրերի կազմակերպման:

Սկզբում յանձնախմբի ատենապետ Արա Գալստեանը ողջունելով ներկաներին, համապարփակ գծերով ներկայացրեց յանձնախմբի նախաձեռնած աշխատանքները՝ Հայոց Ցեղասպանութեան 109-րդ տարելիցի միջոցառումների կապակցութեամբ, նշելով, որ այս տարի յանձնախմբի որոշմամբ Ապրիլի 23-ի երեկոյեան, միայն Թեհրանի Ս. Սարգիս եկեղեցու շրջափակում տեղի է ունենալու երիտասարդական համախմբում եւ գեղարւեստական ճոխ ծրագիր, որի նպատակն է մեր երիտասարդների մօտ վերակենդանացնել պահանջատիրութեան ոգին:

Անդրադառնալով Ապրիլի 24-ի առաւօտեան Թեհրանի Ս. Սարգիս եկեղեցու շրջափակում կազմակերպւելիք միջոցառումներին, Արա Գալստեանը նշեց, որ ինչպէս միշտ կատարւելու է եկեղեցական արարողութիւն մեր Սրբադասւած Նահատակների յիշատակին, ապա եկեղեցու բակում տեղադրւած Բիւրաւոր նահատակների յուշարձանի մօտ տեղի է ունենալու խնկարկում եւ ծաղիկների մատուցում նախ պաշտօնական անձանց եւ համայնքային կառոյցների ու միութիւնների կողմից, ապա ժողովրդի միջոցով: Տեղի է ունենալու ժողովրդական համախմբում, հնչելու են ելոյթներ, կարգախօսեր եւ խօսքեր:

Ատենապետը նշեց, որ ինչպէս ընկալեալ սովորութեան Ապրիլի 24-ի երեկոյեան ՀՕՒՍԿ-ի նախաձեռնութեամբ «Արարատ» մարզաւանի «Սասունցի Դաւիթ» սրահում տեղի է ունենալու բանախօսական-գեղարւեստական յայտագրով միջոցառում: Նա իր գնահատանքը յայտնեց միութիւններին, որոնք արդէն իսկ նախաձեռնել են իրենց ծրագրերը:

Հանդիպմանը, թէ՝ յանձնախմբի նախագահը, եւ թէ՝ Թ. Հ. Թ. Թեմական խորհրդի ներկայացուցիչ Հայրիկ Աղանեանը, կարեւորեցին Հայոց Մեծ Եղեռնի ոգեկոչման ծրագրերին գիտակից հայորդիների մեծաքանակ մասնակցութիւնը, որը վստահաբար իր խիստ արտացոլումն է ունենալու եւ այս հարցով դիմեցին միութիւններին, որպէսզի չխնայեն իրենց կարելին, իրենց միութենականներին մասնակցութեան կոչ ուղղելու առումով: Վերջում ներկաներին առիթ տրւեց հարցումների եւ առաջարկութիւնների արծարծման:


SET Coffee

فروشگاه: هفت تیر، قائم مقام فراهانی، خیابان فجر، پلاک ۱۰
کارخانه: شهرک صنعتی خوارزمی، بلوار ماگنولیا، پلاک ۸۱۱۷

0936-6726563
021-88305827
www.set-coffee.com

قهوه سِت



املاک هنرمندان

● بزرگترین آژانس مسکن مرکز شهر تهران (منطقه ۶)
● خانه های قدیمی تخصص ماست

تاسیس ۱۳۸۸ املاک هنرمندان بزرگترین آژانس مسکن مرکز شهر تهران منطقه ۶

آدرس: میدان هفت تیر، کریمخان، خردمند شمالی، نبش دی، ساختمان ۱۱۹، پلاک ۴

تلفن: ۸۸۸۴۵۵۶۶ – ۸۸۸۴۵۵۷۷
واتس آپ: ۰۹۱۲۹۵۸۵۱۴۰
مدیر داخلی (هماهنگی): ۰۹۳۰۹۲۱۳۷۲۴
مدیریت: ۰۹۱۹۴۳۱۸۳۱۹ امیر قربانی



«Արարատ»

Ամէն տեսակ տնային իրերի գնորդ

سماور ذغالی، نقره جات، ظروف مسی،
چراغ لاله و لوستر،
رادیو لامپی ، رادیوگرام مبله، صفحه گرام ،
لوازم چوبی آنتیک و خرده



Հեռ.՝ 88523388



ՔԱՐԻՄԻ

Գորգերի, սառնարանների եւ գազ սպառող զովամուղի, կահոյքի եւ անտիկ իրերի լաւագոյն գնորդ

خریدار فرش، یخچال فریزر، کولر گازی،
مبلمان، خرده ریز و لوازم آنتیک

Հեռ.՝ 88594063 եւ 09121193212


## ՀՅԴ Պատանեկան համագումարի մասնակիցները՝ «ԱԼԻՔ»-ում

«ԱԼԻՔ» - Թեհրանում կայացաւ ՀՅԴ Պատանեկան համագումար, «Պատանիի ինքնութեան կերտումը» խորագրով, որին իրենց մասնակցութիւնն էին բերել Թեհրանի, Նոր Ջուղայի, Հայաստանի, Արցախի, Սիրիայի եւ Լիբանանի պատանեկան կառոյցների ներկայացուցիչները:

Երէկ՝ ապրիլի 13-ի առաւօտեան խորհրդաժողովի մասնակիցներն այցելեցին «ԱԼԻՔ» եւ ծանօթացան օրաթերթի աշխատանքներին: «ԱԼԻՔ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Արամ Շահնազարեանը նախ «ԱԼԻՔ»-ի «Հրայր Մարուխեան» սրահում անդրադարձաւ օրաթերթի անցեալին, ներկային եւ հեռանկարային աշխատանքներին, որից յետոյ օրաթերթի տպագրական աշխատանքների վերաբերեալ ներկաներին բացատրութիւններ փոխանցեց օրաթերթի ներքին տնօրէն Արգիշտի Թովմասեանը:


ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Օժանդակելու համար օրաթերթիս՝ կարող էք ձեր հին թղթերը յանձնել

**«Ալիք» օրաթերթին՝ առաւօտեան ժամը 8-ից մինչեւ ժամը 20:00-ը**

(Մեծ քանակութեան պարագայում՝ նախապէս համադրելու խնդրանօք)՝ հետեւեալ հասցէով.

**Հիւսիսային Սոհրեւարդի պող., Մոհեբի փողոց, համար 16**
**Հեռ.՝88761154**

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ